

Մասնավոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հազարաւի տասնի համար 1 կոպէկ արծաթ: Յայտարարութիւնները տպւում են չափերէն, իւսերէն, վրացերէն, նրանսիալէն, Գերմաներէն եւ Թուրքերէն:

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

B. U. U.

զինը, գումարված զեղադրանքից արած ծա-
նապարհի ծախսի հետ:

Արձանագրում ենք խօսքը կրկնելով թե՛
մենք համարում ենք քաղաքացու խի տնո-
րենությունը, որովհետև նա քաղաքացու օգուտ
կը բերէ,—բայց համարելով այդ տնտեսկ տնո-
րենությունները պաշտօնական և ոչ
թե՛ երկրի տնտեսական կառուցողական դար-
գացումից առաջացած բնական միջոց,
նայում ենք այդ և սորա նման շատ անգամ
հրատարակված տնտեսկ թիւնների, որպէս
անցաւոր, թոյլ և առեւտրի միջոց-
ների վրա: Ուրեմն մենք չենք կարող հե-
տևել հարցը չառաջարկել մինչև երբ պիտի
անհոգ լինենք, երբ պիտի սկսենք մտածել
արմատական և տեղական միջոցների վրա,
հաստատելով որ ոչ, կանոնաւոր և
արդար տնտեսական յարաբերութիւնները
քաղաքի և գիւղի մէջ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՆԵՏՐԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

Ապրիլի 10-ին կատարվեցաւ Թիֆլիսի
Առևտրական բանկի բաժնեւորների (ակ-
ցիոնէրնի) ընդհանուր ժողովի նիստը նախա-
գահութեամբ Կ. Ի. Բէյաշւի: Ընդհանուր
ժողովում կարողացան բանկի խորհրդի
կողմից արած զեկուցումն (գովարդ), որ պա-
րունակում էր իր մէջ բանկի կարծառու հա-
շիւը, ապա եղաւ ընտրութիւն խորհրդի
երկու անդամների և առաջարկվեցաւ աւե-
լայնել բանկի մայր գումարը՝ 500,000 մի
դարձնելով 1,000,000 մի:

Հաշիւից, որ 'ի դէպ անկողմ դրած է
շատ սխալներով և առասաց լեզուի կանոն-
ներին դէմ, հաշիւից երևում է որ բանկի
տարեկան ընդհանուր շրջակա գումարը
եղել է 75,045,198 մի 18 կողմ, բանկի մի-
ջոցներ եղել են ա) 500,000 մայր գումարը,
որ երեք զանազան ժամանակներ է հատու-
ցած, բ) գրված գումարը (վկար) 777,848
մի 24 կ, գ) ընթացող հաշիւով՝
5,440,856 մի 34 կ և դ) տրոհական
բանկի Թիֆլիսեան բաժնից վերցրած է մա-
նուրը ընթացող հաշիւով և
զեղուց մարած մուր հակնեւրով
1,705,530 մի 62 կ:

Անցիւր տարին զեղած են 1,117 մուր-
հակ 2,231,231 մի 26 կ: գումարի: Այս
մուրհակներից ստացվել է 1,139,959 մի.
92 կ, մնացել է ստանալու 1,091,271 մի.
34 կ: Այս միջոցին բանկը չէ ունեցել ոչ
մի բողոքած (պրոտէստ) մուրհակ:

Բոլոր ծախսերը դուրս դալուց յետոյ,
մնացել է գուտ արդիւնք 34,046 մի 17 կ,
որից 1,702 մի 31 կ. դարձնելու է պատ-
րաստի մայր գումար (զապանի կա-
պիտալ), իսկ մնացեալ 28,925 մի, այսինքն
11 մի 57 կ. իւրաքանչիւր ակցիայի կամ
բաժնի վրա տրվում է որպէս դիվիդենդ
(օգուտ): Անցիւր իսկական արժողութիւնն է
200 մի:

Հաշիւը համաձայն առաջարկութեան նա-
խագահի վաւերացրին ժողովի անդամները,
որքէն մեր պիտաւոր վաճառականները: Ոչ
քան ուշադրութիւն չը դարձրեց, օրինակ, այն
եանին, թե՛ արդեօք ամեն մուրհակի ժա-
մանակը լրանալուց՝ փողերը մոտում են բանկը,
թե՛ մուրհակը՝ փողում էին, որ 'ի հարկէ
մեծ զանազանութիւն է անում գործի հա-
մար: Իսկ զլուսւորը այն էր, որ բնորոշական
մասնագործը (ընկերակցական կոմիտե) ան-
ցեալ տարի ընտրված չէ եղել և չէ քննել
հաշիւները, այնպէս որ հաշիւ ձեռք լինելը
հաստատում է բանկի խորհուրդը հիմնվելով
կառավարչի և զլուսւոր բուխարտերի (հա-
շուապահ) ներկայացրած թուանշանների
վրա:

Բնորոշական մասնագործի մասին եղան
հետաքրքրելի վիճաբանութիւններ, որոնց
մասին մենք մեր պարտաւորութիւն ենք հա-
մարում ծանօթացնել ընթերցողին: Բաժա-
նորդներից մինը յայտնեց իրան դարձանքը,
թե՛ ինչի բանկի հաշիւը չէ քննել քննո-
ղական մասնագործը, կամ ինչի այդ մաս-
նագործը ընտրութեան մասին չէ առաջար-
կվում այժմ ընդհանուր ժողովին: Նախա-
գահը առանց որ և է վիճաբանութեան պա-
պախանեց, թե՛ բանկի կանոնադրութեան
56 և 61-որդ յօդվածների զօրութեամբ նա
կարծում է, որ մասնագործի ընտրութիւնը
աւելորդ է, երբ ընդհանուր ժողովը ուղղէ
համարում հաշիւը, վասնորոյ նախագահը
կարծում է, որ այդ խորհրդի մասին վիճաբա-
նութիւնն անգամ աւելորդ է: Ընդհանուր
ժողովի բողոքութիւնը կազմող վաճառական-
ները միաբերան համաձայնեցան նախագահի
հետ և տարեկան հաշիւների քննելը աւե-
լորդ համարեցին:

Բայց ինչ է դրած այդ յօդվածների մէջ:
Յօդ. 56-ում դրած է՝ Ընդհանուր ժո-
ղովի անհրաժեշտ պարտաւորութիւնն է՝
ընտրել խորհրդի անդամներին և մի մասնա-
գործով տարեկան հաշիւնները քննե-
լու համար (§ 61): Իսկ 61-որդ յօդ. դը-
րած է՝ Եթէ բանկի հաշիւը վաւերացրած
չէ լինի ընդհանուր ժողովից, այն ժամանակ
նա կարող է հաշիւը վերաւարդելու հա-
մար նշանակել մի նոր մասնագործով
և այնուհետև մասնագործին զեկուցումն
քննելուց յետոյ, նշանակվում է նոր ընդ-
հանուր ժողովը:

Թե՛ և այդ յօդվածների միտքը շատ պարզ է,
այսինքն առաջին յօդվածը խօսում է այն
մասնագործի վերա, որ ընդհանուր ժողովը
ընտրում է խորհրդի անդամների ընտրութեան
ժամանակ տարեկան հաշիւնները
առ հասարակ քննելու նպատակով իսկ երկ-
րորդ յօդվածը խօսում է առանձին մաս-
նագործի վերա, որ ընտրվում է միայն այն
ժամանակ, երբ ընդհանուր ժողովը չէ վա-
ւերացրել հաշիւը,—բայց այնուամենայնիւ
ընդհանուր ժողովը ընդունեց նախագահի
կարծիքը: Իսկ նախագահին այդպիսի մեկ-
նութեան համար վստահութիւն տուեց այն
հանգամանքը, որ 56 յօդվածից յետոյ փա-
կազուցում դրած էր 61-որդ յօդվածը...:
Փաստաբանական դատողութիւն...

Նոյն կանոնադրութեան 67-որդ յօդ. մէջ
փակագծում ցոյց է տուած 60-որդ յօդ-
վածը: Ուրեմն 67-որդ յօդ. նշանակութիւն
չը պիտի ունենայ:

Այժմ դարձնում ենք ընթերցողի ու-
շադրութիւնը խորհրդի երկու անդամների
ընտրութեան վրա:

Նախագահը յայտնեց, թե՛ խորհրդի ան-
դամութիւնը թողել է պ. Գուրինսկին և
Թոդնում է ինքն, որովհետև մասնաւոր գոր-
ծերով զբաղված լինելով, ժամանակ չէ գտ-
նում բանկի գործերով պարպել: Արեւ-
իշեալ բազմութիւնը միաբերան խորհրդին
պ. Բէյաշւին մնալ խորհրդի անդամ և նա-
խագահ,— և պ. Բէյաշւին համաձայնեցաւ:
Ուրեմն մնում էր մի ազատ տեղ: Խորհրդի
անդամներից երկուսը (պ. պ. Օնիկով և Նա-
դիրեանը) յայտնեցին իրանց կարծիքը թե՛
հարկաւոր է ընտրել զբաղուտ և կրթված
մարդ այդ պաշտօնի համար, նա մասնաւոր,
որ խորհուրդի միւս անդամները մեծ մա-
սաբ վաճառականներ են: Նախագահը չը
համաձայնեցաւ այդ մտքին, յայտնելով որ
հարկաւոր է անպատճառ վաճառականին
ընտրել, իսկ ինքն առաջարկեց երկու անուն-
ներ՝ մինը բարձր պաշտօնականի և միւսը
վաճառականի: Բարձր պաշտօնականը հրա-
ժարվեցաւ, իսկ նախագահի առաջարկված
վաճառականը ընտրվեցաւ ու թե՛ քաւ և ար-
կու թե՛ և միւսը թե՛ թե՛ քաւ և միւսը թե՛ քաւ:

Նախագահի և ժողովի բազմութեան ցան-
կութեանը:

Ժողովում կային մօտ 60 անդամ, իսկ
նախագահի առաջարկածը ստացաւ միայն 21
ձայն, մնացեալ ձայները, թե՛ և 21-ից պակաս,
ստացան միւս անձինք: Թե՛ և 60 թուի հա-
մար 21 ձայն առաւելութիւն չէ,
բայց ընդհանուր ժողովը դարձեալ ընդունեց,
որ այդ ընտրութիւնը իրաւական է և վա-
ւերացրեց: Թե՛ և բաժնեւորներից մինը ցոյց
էր տալիս այդ տեսակ ընտրութեան ապօրի-
նութիւնը,—բայց վերջ 'ի վերջոյ կղաւ այն
ինչ որ կամենում էին իշխանութիւն ունե-
ցողները:

Բոլոր վերեւ ասած իրողութիւնները աչքի
առաջն ունենալով, կարելի է արդեօք ընդ-
հանուր ժողովի նիստը օրինաւոր համարել:
Առաջարկում ենք այս հարցը մեր ընթեր-
ցողներին, Թիֆլիսեան առևտրական բանկի
ակցիոնէրներին և այդ բանկի հետ գործը
ունեցողներին:

Խորհրդի կողմից առաջարկված երրորդ
խնդրը, այն է մայրաքույր կրկնապատկելը,
վճարվեցաւ այնպէս, որ խորհուրդը պիտի
խնդրագիր տայ կրկնապատկելու մասին և
իրաւունք ունենայ առաջին անգամ ակցիա-
ներ հրատարակել մինչև 250,000 մի., իսկ
միւս 250,000 մի. ակցիաների համար հրա-
ւիրէ առանձին ընդհանուր ժողով:

Արձանագրեալ տեսնում ենք, որ խորհուրդը
կամենալով ժողովը դադարեցնել ինչ ևս ստա-
նալ, առաջ է բերում այն իրողութիւնը, որ
1117 վերսիկից 619-ը 1000 ռուբլից պա-
կաս են եղել, յուրեմն, ասում է նա, բանկի
կրէդիտից օգուտ են քաղել մանր վաճառա-
կանները և ոչ թե՛ մեծ առևտրական ար-
ները (?):

Կարծես թե՛ մի մեծ առևտրական տուն
չի կարող մի քանի մանր վեքսիլ
ներկայացնել...

Հրաւիրում ենք մեր ընթերցողի ուշադրու-
թիւնը հետևեալ թուանշաններին վրա՝ վերսիկ
ներկայացողների թիւը եղել է 348, վերսիկ
տուողների թիւը՝ 551, իսկ վերսիկի միջին
գումարը եղել է 1997 ռուբլի: Չենք կար-
ծում, որ երբ վերսիկի միջին գումարը
հասնում է մօտ 2000 մանէթի,—չենք կար-
ծում որ այդ տեսակ կրէդիտը կարող է
մանր կրէդիտ անուանվել:

ՆԱՄԱԿԱՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
(Թիւրքու զաւառում)

Այս տարի մեր ու Սիւնիալու զաւառների
ժողովրդականաց դրութիւնը բոլորովին աննա-
խանելի է, պատճառը հայի պակասութիւնն է,
որին ուրիշ խօսիլով ասում ենք սուր Բայր-
կաւոր է իմանալ, սուրի պատճառն ինչ է:

Այդ հայի պատասխանները շատ ունենք ա-
սելու, օրինակ ինչպէս յայտնի է անցեալ տարիքը
անաղջ անցան մեզ համար, մէկ կողմից խաղողի
հիւանդութիւնը, միւս կողմից կարկուտ բողոքովին
զրկեցին խիզ՝ ժողովուրդին իրանց կենսական
ապրուստի պիտոյքներից: Այդպիսի վնասներ կրե-
լուց յետոյ ժողովուրդը ընկաւ խնձութեան մէջ,
այն և հարստահարութիւնը մեր պատուելի կօ-
պիտակաւորների կողմից ի կարմիր խնձոր չէին
մեզ համար, բայց մեր աղքատութեան իշխաւոր
պատճառը մինչև օրս չենք հասկացել և չենք էլ
կամենում իմանալ, դա մեր ծուլութիւնն է որոյ մէջ
ընկղմած ենք դարերով:

Պարբերական հրատարակութիւնը շատ են խօ-
սել մեզ խիզ՝ զաւառ հասուցած հարստահարու-
թեանց վերա, բայց ոչ մի վաճառական—հարստա-
հարչ այս քաղաքները լսելով չի հրաժարվում իր
անդուլտ պահանջներից և չի դարձնում մեր մուր-
հակներն, որոնցով պարտ ենք նորան քանի թու-
մաններ, դուցէ՛ եթէ պարտականը հինգ թու-
մանի տեղ չորս թուման ձեռքին դառնայ՝ դէպի
փողատեղը, այս վերջինը զիջողութիւն անելով, կը
դարձնուցանէ մուրհակը, բայց այս դրութեան մէջ
մեզ ոչ է տուել թումաններով փող մեր պարտ-
քերը վճարելու համար: Սորանից կարելի է եղբա-
կացնել, որ մեր դրութիւնը չի ներում որ պարտ-
քեր վճարենք և վաճառականներն էլ չեն բաշխե-
լու մեզ իրանց մուրհակներն և տարեց տարի, կամ
պէտք է անկացեն տոհմները, և կամ ժամա-

նակը լրանալուն պէս յայտնեն մեր մուրհակներն
դատաստանին, որի կանոնաց համաձայն պիտի ծա-
խուի մեր վերջին պայմանաւ միայնակ նեղուկ մի
այգին, որից յոյս ունէինք ստանալ անքան ար-
դիւնք, որ կարողանային մեր պարտքերը վճարել:
Մեր ընտանիքը կերակրել, մեր հարկերն վճարել
մէկ խօսքով մեր բոլոր կարիքը լցուցանել, բայց
զրկուելով այդ միակ յոյսից մեզ ինչ է սպասում,
զուրկ դուռն ողորմութիւն հաւաքել ինչպէս վար-
վում ենք այսօր:

Որեք օր վատանում է մեր վիճակը, թե՛ որքան
ժամանակ կտէ այդ հարուածը, ոչով չի կարող
զուլակել: Իմ կարծիքով խոնարհութիւնը արդէն ար-
մատացել է մեր մէջ և նորան արմատախիւ անե-
լու համար հարկաւոր է շատ աշխատութիւն հա-
ստարակ դասի կողմից: Մենք աղքատներս հա-
ւատացած ենք, թե՛ մեր այժմեան դրութիւնը մի
պատիժ է, որ ուղարկում է Աստուած մեր չարա-

գործութեան պատճառաւ, դորա համար է որ տա-
րին քանի անգամ հաւաքուելով խումբ խումբ
ոտարորիկ, զլխաբաց, մատաղներով դիմում ենք
դէպի բարեխօսութիւնը սուրբ Ալլահի վրա՝, բայց
անօգուտ, հիւանդութիւն բաժանող և կար-
կուտ կողուող չեն լուսւոր մեր աղայանքը և ոչ
էլ սուրբ Ալլահի վրա՝ միջնորդութիւնը: Սիրելի
ընթերցող, մի աղք, որ զգում է իրա թիւ ծան-
րութիւնը, հակառակում է նորա պատճառը և հետեւ-
ւանքը, երբ որ իցէ այդ ճնշողութիւնից կազատուի,
մենք հասկանում ենք որ վատթար վիճակի մէջ
ենք, բայց չենք հասկանում որ նորանից աղա-
տուելու համար մեզ հարկաւոր է աշխատութիւն,
աշխատութիւն և դարձեալ աշխատութիւն:

Ինչպէս վերեւ յիշեցի մեր Թիւրքու զաւառն
խաւոր պատճառը մեր ծուլութիւնն է, նա է որ
ժամանակի հոսանքին հետ կլանում է մեր զոյգու-
թիւնը, մի քանի տարուց յետոյ, եթէ այսպէս աշ-
խատելու լինենք, կտանէք որ մեր խիզ՝ զաւր
բողոքովին կկողմէ, թե՛ ինչ անբարոյականութիւնը
են տարածվում մեր մէջ հայի պակասութեան
պատճառաւ, դա յայտնի է միայն Աստուծոյ և մեզ
խեղճերէս... այս ցեխից հանելոյ համար մեզ
հարկաւոր են ճղոտ ու աշխատող ձեռքեր, մտա-
ծող ու խոնարհ գլուխներ... Մենք ունենք ձեռ-
քեր, բայց նոքա դրադուած են, ոչ թե՛ հողագոր-
ծութեամբ ու աշխատութեամբ, այլ նոքա ամուր
գրգռում են մեր ծուլակներին սօթ ժամանակները
շուաքներով, իսկ ցուրտ ժամանակը մեր օճախ-
ների կողքին նստած:

Կովկասը նոքա վրաւոր ազգութիւններ ունի
բանած իր վերա, զլաղից, հայը և թուրքը: Վրա-
ցիք այդ ազգութիւնների մէջ ամենածայր հասա-
րակութիւնն են ուրեմն և ամենախեղճ դրութեան
մէջ գտնուողներն: Նոքա չունեն ոչ վաճառակա-
նութիւն, ոչ արտաւարտագիտութիւն, ոչ երկրագոր-
ծութիւն, նոքա առանձնապէս դրադուած միւս աշ-
գիւղանութեան: Վրացին, իւր այգուն նայելով
թիւնը բարդած, ծուլակները ծալած ու բերանը
բացած, աղաղակում է թարաքամի առածի պէս
արմուտ, արմուտ դուռ աղղուց սալով ուխարիս
(տանձիկ, տանձիկ, ընկիր բերանս կուրծք վերեւ):
Մենք այստեղ թիւրքաւ ազգաւորութիւն չենք քա-
րողում, մենք անաշխատութեամբ խօսում ենք մեր
կղերաց պակասութեանց վերա: Մենք չենք ուրա-
նում, որ վրացներ բերքերն անաղջ են, բայց եթէ
նորա այգին ամենաաւատարմ պիտուղ տայ, դարձեալ
դա մի այնպիսի աննշան անտեսականութիւն է,
որ երբէք չի կարող լցուցանել, ժամանակի պա-
հանջմունքին նայած, նորա կարիքներն: Գուցէ եղել
է մի ժամանակ, որ մեր պայքերը մի և նոյն տնտե-
սականութեամբ կառավարել են լիապէս իրանց
ընտանիքը, բայց այն ժամանակի պահանջներն
ուրիշ են եղած և այժմ ուրիշ են, դորա համար
երկար խօսելն աւելորդ ենք համարում: Մեր հարե-
ւան աղջիկը, օրինակ Լեզգիները ջաքաթալու նա
հանգում, մի քանի գիւղերով զուլում, Մուսուլում, Կա-
խում, Ալիարքում, Ալիբեկում, Դորադա-
նում պարապվում են այնպիսի անտեսականութեան,
նոքա ու-
նեն այնպիսի այգիներ ինչպէս մենք, բայց նոքա
մեզպէս միայն այնպիսի անտեսականութեամբ չեն
պարապվում, նոքա պարապվում են բայց դորանից
հողագոր-
ծութեամբ և չնրամապահովութեամբ և հենց դա է
պատճառը, որ մեզանից հաղաւարտ մարդիկ այժմ
ջաքաթալու հասանգի գիւղերով զուլում ողորմու-
թիւն են հաւաքում, թող ոչով չի կարծի որ մեր
երկիրը ընդունակ չէ հողագործութեան, մեր Ալա-
դանեան հովիտը շատ պողաբեր է և բոլորովին
կուսական դրութեան մէջ, հարկաւոր տարի է
որ մեր երկիրը չի ճաշակել արօրի կենսաբեր հա-
ղորդակցութիւնը:

*) Գա մի հոյակապ վանք է Թիւրքու զ փրատ
հեռավորութեամբ, այստեղ ժողովվում են ուխտա-
ւորներ Վրաստանու ամեն կողմերից ըստ մեծի
մասին սեպտեմբերին, այդ օրն նորա ուխտադնա-
ցութեան օրն է:

ՆԱԾԱԿԱՆ ՄԵԾՈՒՆԵՐԻՑ

Ինչպէս Մեծ-Եւրոպայի անտառները պատկա-
նում են զանազան խիտանքներին՝ նոյնպէս և բոլոր
վարելահողերը պատկանում են մասամբ այդ ան-
տառատէր խիտանքներին, իսկ միւս թուրք երկու հա-
զդի ազնուական տան-Քալանթարեանցներին *)
և Մէլիք-Սարգսեանցներին՝ Առաջինները աւելի
մեծ ազդեցութիւն են անում գիւղի վերայ քան
երկրորդները, բայց կարելի է ասել, որ թէև փոքր
խնամակալ աչքով են նայում գիւղացիներին վերայ,
բայց մինչև այս օր ոչ մի առանձին օգուտ չեն
տուել նորանց, ոչ մի բանում չեն կամեցել գիւղի
ոչ մի շահաւետութեանը մասնակցել լինել, մինչև
այս օր նորանցից ոչ մէկը ձայն չէ հանել գիւղի
յառաջադիմութեան համար, Սորանք տառնում են
տասանորդ (1/10) մասը վարելահողերի արդիւնքի
գիւղացիներին: Մեծ-Եւրոպայիցները վարում են
նոյն գիւղում մինչև 4000 օրավար միայն, այդ
ի հարկէ չը բաւականալով մի այդքան էլ վա-
րում են չըջակալ գիւղերում առաւելապէս թորչա-
լուում: Առ հասարակ Մեծ-Եւրոպայի հողը շատ
երբրի է և մինը միջին թուով տալիս է տասը
առանց ջրի տեղում, իսկ ջրովի տեղում ոչ պա-
կաս քան 15 (1 թաղար ցանկով մի օրավարում
ստացւում է 15 թաղար ցորեն: Ցորենով ընտրի
տեսակիցն է և կան մի քանի տեսակներ անուն-
ներով՝ սիւպուկ է—գարդալ (շատ սպիտակ հա-
տիկներով), դէղնէղարդալ (դեղնաւուն), կարմիր է
գարդալ կարմրուն և գարանի (թխաւուն և
շատ փափուկ դարձան ցանածը): Տեղիս հացը դե-
բարեցւում է իւր բաւական համեղութիւնով և
սպիտակութեամբ, բայց փոքր փրկաւուն: Թիֆ-
լիզում ծախվում է 10—20 կոպէկով աւելի քան
Ալեքսանդրապոլիցը: Մեծ-Եւրոպայիցները վա-
րելով թէ նոյն գիւղում եթէ դուրսը մինչև 800
օրավար հող երկու տարուայ մէջ չէ բաւականա-
նում նորանց, համեմատելով նորանց աշխատու-
թեան հետ, և աւելի հաւաստի կը լինի եթէ հա-
ւատանք մի քանի գիւղացիներին հաստատութեանը,
թէ՛ Մեծ-Եւրոպայիցը այժմ հասանելի կը լինի
մինչև 700 տան, թէ՛ կամեցողայում յայտնում է
մինչև 400 տուն: Այդ հողի քլովիսն պատճառաւ
որ խեղճ գիւղացիները, երկու լուծ եղն ու գոմէշ
տանելով մինչև 30 վերստ հեռավորութեանը տեղ
վար անելու, գողանալ են տալիս նամանաւանդ
Բորչալուում իւրեանց եղները, կամ հիւսնդա-
նում են տեղում այն տեղի վնասակար ջրի պատ-
ճառով: Վարում են հողը գարնանաւորին հին
տեսակ գութնաւով, լծած ոչ պակաս քան 7 լուծ
եղն ու գոմէշ, իսկ նորան քանեցնողները մինչև
10 հոգի, այս բոլորը միասին հազիւ կարողա-
նում են մի օրում վարել մի օրավար: Մի և նոյն
հողը վարում են երկու տարեկը մի անգամ, գու-
թանով վարածը, որին ասում են ցիւլ թողնում են
մինչև աշնանը, այդ ժամանակը կրկին վարում են
լուծով մի լծանի, յետոյ արդէն ցանում: Ցանե-
լուց յետոյ հատիկները ծածկելու համար, կամ ինչ-
պէս ասում են, ցարելու համար գործ են ածում
ցաքան, անցկացնելով նորան եղներով հողի վերա-
ջաքանը գործում են ձիւն ծաւերի հեղեղից
սկզբից նեղ տախտակի չափ, իսկ գործած հիւ-
ղերի ծայրերը թողած արձակ: Ցանելուց յետոյ
գիւղացին թողնում է նորան անհող և երկրի ամ-
պերիցն է ողորմութիւն վնասը, իսկ եթէ մի
փոքր ջուր է ձանկում, աշխատում է շուտով նեղ
ցանելուց յետոյ ջրով, կամ թէ չէ գարնան ջրերին
է օգտւում: Գոմէշին արդէն սկսվում է հոծնը:
Երևում են այստեղ Հին-Նախնիկանցի կամ Վա-
նեցի մշակներ մանգաղներ և մասնոցներ ձեռ-
քերին **) հնձելու համար՝ նորանք վարձվում են
այստեղ 50—60 կ. օական, ի հարկէ գիւղական
սոլորութեան համեմատ բացի հացը: Բայց մեր
Եւրոպայիցները այժման էլ չեն կարողանում նո-
րանց հնձին, որքան ուրիշ տեղացիները, նորանց
արիւնը եւ զգալի երբ տեսնում են արոր
մարդի հասակի չափ ծովի նման քամից ալիկոծ-
վում է, ընկնում է մէջ այս ծայրից և խուճընա-

*) Քալանթարեանցներին նախահօր քաջութիւնը
յայտնի է Վէլքը Հայաստանի Ազատի գրեթէ Այդ
արա անունով, նորա որդին ձեռք է բերել այդ
վարելահողերը այդ ժամանակներում հօր մահուա-
նից յետոյ Ներսէս կաթողիկոսի նորոգով, ինչպէս
պատմում են: Սորանց տունը գիւղի մի նշանա-
ւոր բերի վերայ է յիշած, որի վերայ վրաց էրանի
խանի բերդն է եղել և մի և նոյն ժամանակ նորա
ամենասիրելի բնակարանը, այդ բերդի պատերի
հետքերը դեռ ևս նշմարվում են: Մէլիք Սարգս-
եանցներին նախահօր նոյնպէս յայտնի է իւր քա-
ջութիւնով նոյն ժամանակում Մէլիք—Օհանջան
անունով:

**) Մասնոցը բարակ է ձեռնի ընդմիջման չափ
տախտակ է սուր ծայրով, չինում է վրէժ 3 մասի
տեղ և մի փափուկ կաշի կցորած ձեռքի երկու
համար, գործնով գիւղացին արոր հաւաքում է
առաջը և մանգաղով կտրում:

ւարած ձեռումը այն ծայրին: Վերջացաւ հունձը՝
խկոյն կրում են խուճը մեծ օրանի ասուած սայ-
լերով և ապա կատում են կամ քիւղ, որը հաստ
տախտակ է մանր կոշտ քարեր ամրացրած միւս
երեսի վերայ, դորան քարը են տալի ձիւնները
կամ աւելի եղները կաշի մէջ փռում հասկերի
վերայ: Այսպէս կամով կատում են, հորսիով
(5 ձիւնանի թիակ) և թիակով եղում են (Վարդա-
նանի կոր ցցերով է վերջանում) խուճը վերցնում
են՝ նոյնպէս հորսիով յարդը ցորենից քամուն
տալով բաժանում, մէջանով յարդը մղում են և
ածում մարդը և այլն: Կան այստեղ այնպիսի
մարդեր, որոնք հացի մշակութեամբ աղատուել են
իւրեանց հայրական մեծ տոկոսով պարտից և
մի և նոյն ժամանակը ապահովացրել են իւրեանց
նրբակաւն վիճակը ու աւելի մեծ տոկոսներով
սկսել են փող փոխ տալ իւրեանց առաջնայ պէս
աղքատ գիւղացուն, որը նորանց պէս հարուստ է
եղել, բայց սորանց հարստութիւնը ընկել են մի
ուրիշի ձեռքը: «Այսպիսի սանցուղը է» ասում է
ժողովրդական առածը, մինը բարձրանում է միւսը
իջնում է, և այս նեց իսկ նորանց պատկերն է:
առ հասարակ մի գիւղացիներից մինը հարստա-
նում է միւսը աղքատանում: Երկուսը ի միասին
հարաբարալ դժուար է լինում նամանաւանդ
այստեղ: Եթէ այսօր մէկը հաց ծախելով մի քանի
կոպէկ է ժողովել աշխատում է բաժանել խեղճ
գիւղացիներին մեծ տոկոսներով ու ինքը չարու-
նակում է հանգստութեամբ իւր երկրագործու-
թիւնը նոյն ձևով խնդր արել են իւր պապերը, ոչ
աւելցնում է և ոչ (եթէ կարողանում է միայն)
պակեցնում: Վիճակագրութեանը փոքր յետ հոգի-
ները իսկոյն պարագուս են գինեվաճառութեանը
(չիւրախութեանը) և մասամբ մանրավաճառութեանը,
նա եթէ ունէ մեծ այդի իւր գինու հետ միասին
ծախում է աղքատ գիւղացիներին գինին, գինուայլ
(այսինքն չիւրա ժամանկը դնում է գիւղացիներից
40—50 կոպէկով) պահում է գինի է չինում ու
ծախում է թիֆլիզում 1 ու—50 կ. շատ անգամ
Մեծ-Եւրոպայում ծախվում են քիչ պակասով նոյն
գինի: Չնայելով այսքան բերքերի առատութեանը
և ժողովրդի աշխատութեանը, դարձեալ աղքատ
են գիւղացիք: մի տարի եթէ փոքր պակաս է լի-
նում բերքը գիւղացին իսկոյն թաղվում է պարտի-
անդունդում, նամանաւանդ այն տարի, շատ
թշուառ վիճակի մէջ է Մեծ Եւրոպայիցը: Եթէ
մասամբ այդիները չլինէին անշուշտ սով կրկնէր
այստեղ: 30—40 օրավար ցորեն ցանողը սերմա-
ցու գոնէ չվերցրեց ուր մնաց 2—4 օրավար ցա-
նող խեղճը: Այս տարի թէև 1000 թուրքի տուող
այդին տուէց 500 թուրքի, բայց անցեալ տարի
որ չիւրէն ծախվում էր 40—50 կոպէկով այս տարի
ծախվում էր 60—70 կ.: Անցաւ հինգ ամիս երբ
բոլոր գինին անցել էր այն գինեվաճառների ձեռքը
նոյն գինը պակաս էր ծախվում ինչ դնով գինե-
վաճառները էին գնել, ուստի թէև մեր գիւղացի
հարուստ գինեվաճառները վնասուեցան, բայց աղ-
քատները չահուեցան:

Մինչև 700 խաղողի այգիներ չըբաւանում են
Մեծ-Եւրոպայիցը: մշակվում են ամենայն բերքերը
ինչ որ կողմաւի կլիմային են պատկանում, բայց
քիչաւորապէս գերազանցելու է այստեղի խաղողը
և դեղձը, որ աւելի բարձր գնով են ծախվում
թիֆլիզում, քան միւս գիւղացիներինը, բայց դո-
րանից միւս ծառեղեղների մրցելը աւելի համեղ
են լինում քան թիֆլիզինը: Խաղողը բաժան-
վում է շատ տեսակների անուններով: Եսցելու,
խանուղ, յիւսանկներ, ծակներ, բանդղեղների,
չամկներ, չիւսանկներ, սառուսաղ, սպիտակ խա-
ղողներ են: Իսկ սև խաղողները անբեր, օսփա-
րոյ, քակ և այլն: Այդի մշակելը պարտել բաւական
դժուարութեամբ է լինում, պատճառն է տեղիս
ջրի պակասութիւնը, որովհետև մաղը այսինքն
հաստ ձիւղը խաղողեղու, որ կանխում են թաղել
խաղողենի տնկելու համար, թաղում են մինչև եր-
կու արշին խորութեամբ տեղում, նոյնպէս և ա-
մէն տեսակ ծառեղենը: Նոր ցցած մատը խա-
ղող է տալիս աւելի մեծ ողկոյններով (հիւթ) 3
տարից յետոյ, եթէ առատութեամբ ջրեն, իսկ մի
քանի տարից յետոյ երբ նոր խաղողենին ունե-
նում է զօրեղ ճիւղեր՝ նորան այսպէս ասում են
քցան և ն անում: այսինքն նորա ճիւղերը այս
կտմ այն կողմում թաղում են մինչև երկու ար-
շին խորութեամբ և այդպէս բազմացնում են նո-
րանց թիւը: Գաղթը տարին սա արդէն լաւ խա-
ղող է տալիս: Ինչպէս այնպիս կամ գարնան ժա-
մանակը, որ գիւղացին կտրուում է անգլեղը ճիւ-
ղեր խաղողենու՝ նոյնպէս և յետամում է լինում
նորա բուսած ճիւղերից, որին ասում են չուշ, ան-
գլեղները կտրուել, իսկ խաղողի հասած ժամա-
նակը, եթէ տարին երաշտ չէ լինում բաց է ա-
նում խախող տեղները կտրուելով, կիզող արե-

ղակի տակ, այդ ժամանակ, դեղնում է սպիտակ
խաղողը որպէս դեղին՝ նախ: Աշնանը որ արդէն
բոլորովին հասած է լինում քաղում են սպիտակ
սկը առանձին, ածում են հնձանը, որը կտրեա-
կան ձեւով կրով ու աւազով պատած ու սրած
պատերով են չինած, և այստի մի կողմում չիւրէն
անցնելու ծախն է չինած որով թափվում է աման-
ները: Իսկ մղում են խաղողը նորան ոտնակոխ
անելով: Երբէն, նոր գինին երկու կամ երեք օրից
յետոյ, երբ ածում են նորա մէջ գինու մղումը
(ձաճէն), սկսում է եփ դալ, այդ ժամանակը միը-
նում են ձեռքերով կամ փայտեղով խոռնել, անց-
նում է 8—10 օր չիւրէն սկսվում է դառնալ, իսկ
իսկ եթէ լաւ չիւրա է լինում աւելի ուշ մինչև 15
օր: Երբ բոլորովին դինի է դառնում, ծեփում են
կարսի բերանը ցնիով և այդպէս պահում, իսկ
աւելցնել մղումը, որ լինում է նորա կլիս չափ,
որը խառնել են գինու հետ՝ պահում են առանձին
ամանում վրէժ ջուր աւելացնելով և քարեր դար-
սելով վրէժ, այն ժամանակներում մինչև գինից
մղումը հանելը, որին ասում են կրտսել, չա-
քաթ մի անգամ բանում են ամանի բերանը և
արորում: Երկու ամսից յետոյ խառնում են բոլո-
րովին գինին, հանում են մղումը և օղի քաշում:
Մղումը ածում են մի մեծ կաթնայի մէջ, մի
ուրիշ կաթնայի նման էլ որ ունէ խողովակ դը-
նում են նորա վերայ շուր տուած, այդ խողովակը
մտնում է ջրի մէջ և ջրի միջով անցնում ու դը-
նում է այնտեղ՝ որտեղ պէտք է թափուի օղին:
կաթնայի վրայ դրած կաթնայի նման խուփը լա-
ւաւորացնում են մեծ կաթնայի վերայ և ծակերը
ցնիով կաշում, մղումը օղին աւելացնում են
ջուր ու յետոյ թե՛ կրակ վառում: Փոքր ժամա-
նակից յետոյ երբ եփ է դալիս, դուրսին անցնե-
լով ջրի միջով անցնող խողովակի միջով, կաթիլ-
ներ է դառնում և թափվում է ներքե ամանի մէջ:
Այս առաջին անգամի ջրաշախ օղի ածնում չիւ-
տալիս նորան ասում են սալ և ալ, նա շատ թոյլ
է լինում, բայց երբ կրկին քաշում են այն ժա-
մանակը ստացվում է իսկ օղին և կուտ են նո-
րան ծծանաքար: 1000 թուրքի գինու մղումը
քիչ ստացվում է մինչև 60 թուրքի օղի միջին
թուով: Բացի այն, որ վարում են խաղողենու
տակը, ածում են նորանց տակը և աղը (փէշին)
այս փէշինը մեծ օղուն է տալիս խաղողենուն, պա-
րարացնում է նորա ճիւղերը, նոյնպէս պարար-
ացնում է ու աւելացնում է նորա ողկոյնները,
պահպանում է ցրտից, երաշտութեանից՝ բայց ան-
ձեռնային ժամանակը փտում է և գինին լաւ չէ
լինում, ընդհանրապէս քիչ վարած այսինքն խամ
տեղի գինին գերազանցվում է փէշուտ և վարած
տեղի գինուց: Այստեղ արդէն 72 թուրք չէ նըշ-
մարվում այն թուրք, որ խաղողը փայցնում էր:
Տիրում է նա մի գիւղացիք երբ նկատում էին սա-
րիկի վերայ ամառ ժամանակ մաղը տ օթ (ամպի
նման) կանգնած, իսկոյն գուշակում էին թողի գա-
լուստը, բայց այս տարի և ոչ անցած տարի չերե-
ւացին երկուսն ևս: Եւրոպայի գինին չէ կարելի
յետադասել կախիթի գինուց և կարելի է ասել
պատեղի սպիտակ գինին և շատ անգամ կարմիրը
նախադասել է կախիթուց: Այս տարի երեանցին
այնպէս գինիք, որոնք քաղցր էին միայն լաւու-
թեան պատճառաւ և հաւասարվում էր երուպա-
կան ընտիր գաւառատուած գինու հետ, իսկ օղին
ամենագործին է լինում: Վերջացնելով նամակս
յայտնում եմ, որ արդէն այստեղ սկսել են ուսում-
նարանների մասին ձայն հանել, մի տեղ ուսա-
նում են մինչև 15 օրիորդներ, ազնուական մե-
լեղներից մի ազնիւ պարս խորհում է յայտնել
ժողովրդին տեղիս պ. Նաղդիբեանցի ուսումնարանը
տեղականի դարձնել, և ասում են որ այդ պա-
րունը, որ մեծ ընդունելութիւն ունի ժողովրդեան
մէջ, միտք ունի ուրիշ շատ գիւղին օգուտւէն բա-
նել անելու: ուրիշ կարող եմ ասել այսահետ
որ մեր ազնուականներն էլ են օգուտ տալիս գիւ-
ղացիներին:

18-ն Մարտի Արշակ Ծատուրեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 12-ին թիֆլիսի հայ-թատրոնական
խումբը ներկայացրեց ճիւղային թատրոնում «Ա-
մէլ» ողբերգութիւնը: Իսկ այս հինգ քաղթի օրը
ապրիլի 26-ին նոյն խումբը պիտի ներկայացնէ
«Արշակ» ողբերգութիւնը:

Ղալաիից գրում են մի լրագրին՝ ապրիլի
5-ին վախճանվեցաւ այստեղ ազնուական տիկին
Մարգարիտա Քալանթարեանցը, որ միշտ
յայտնում էր մեղ կենդանութեան ժամանակը իր
ունեցած համակրութիւնը դէպի Ղալաիայ աղ-
գային ուսումնարանները: Եւ այժմ կամելով իրա-

դործել իր ազնիւ ցանկութիւնը, թողեց յօգուտ
ուսումնարանների 1000 ռուբլի փող: Բացի սո-
րանից ընծայեց 1000 ռուբլի եկեղեցեաց համար:

Հինգաթի օրը ապրիլի 19-ին թիֆլիսի ձը-
մերային թատրոնում հայ օրիորդներ, տիկնայք
և երիտասարդներ ներկայացրին պ. Ստեփանիկայի
«Քանդած օջախ» նոր կօմիդիան: Առաջին ան-
գամն է, որ հասարակութեան այն մասը, որ մինչև
այժմ կարծես անտարբեր էր մնում մեր բոլոր գա-
ղափարներին և զգացմունքներին, — մեր կանանց
սեռը, — առաջին անգամ հրապարակապէս մեծ
թատրոնում է դուրս գալիս իր մայրենի լար-
բառով: . . . և ինչ եմք տեսնում. . . . հայ կինը ու
աղջիկը թէ իրանց մաքուր արտասանութեամբ,
թէ կենդանի և ընական խաղով, գերազանցում են
երիտասարդ տղամարդկներին: . . .

Չեմք կարող չը յիշել և այն ուրախալի երեւոյթը,
որ հայ-երիտասարդների թուում մասնակցում էր
և մի վրացի երիտասարդ:

Մոսկ. Եթ լրագրեր հաղորդում է որ կովկասեան
գլխաւոր կառավարութիւնը ներկայացումն է ա-
րել համարել թիֆլիսի քաղաքային ընտրութիւն-
ները ներգործական, մինչև քաղաքային նոր կա-
նօն ադրուել է այն մտնելը:

Մեք ստացանք պ. Անտօն Մէլք-Դադայեանցից
մի յօդուած, որ է պատմական «Մեղու Հայաս-
տանի» լրագրի յօդուածին: Միւթերով խեղճված
լինելով, ստիպուած ենք յետ ցնել յիշեալ յօդ-
ուածը:

Ալեքսանդրապոլից գրում է մեղ պ. Գ.
Յ. Ղասապեանցը, որ «Մեղու Հայաստանի» լրա-
գրում (№ 7) նոյն քաղաքից հաղորդած տեղե-
կութիւնները սխալ են պ. Տէր-Դաւիթեանցը հա-
ղորդել է յիշեալ լրագրին թէ 5000 տուն հայ-
լուսաւորական են, նոյն թուում 200 տուն հայ-
կաթօլիկ, յոյներ 200 տուն և տաճիկներ 100
տուն: Իսկ մեր թղթակիցը ասում է թէ հայ-լու-
սաւորականները 3900 տուն են, կաթօլիկ 40-ից
պակաս, յոյները 60 տուն և տաճիկները 30 տուն:

Վիեննայի աշխարհահանգէսից «Մշակ»
լրագիրը կունենայ երկու թղթակից՝ միս պ. Բ.
Թ., որի նամակը տպվում է այս համարում, և
երկրորդ՝ պ. Ա. Վարդապետիկեանցը:

Ալեքսանդրապոլից գրում են մի լրա-
գրին որ այդ քաղաքում ընթերցասիրութիւնը հե-
տընտես յառաջանում է և լրագրի կարգալը սո-
վորութիւն է դառնում: Հայ-պարսկական հրա-
տարակութիւնը ստացվում են այստեղ հետեւալ
թուով. «Արարատ» 52 օրինակ, «Մշակ» 45 օրի-
նակ, «Մեղու Հայաստանի» 30 օրինակ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Ապրիլի 18-ին, երեկոյան 9 ժամին
Միւնխէնում վախճանվեցաւ երեւելի
Գերմանացի պրօֆէսօր քիմիքոս բարոն Գոն-
Լիբիխ: Գերմանորութիւն կայ Միւնխէ-
նում արձան կանգնեցնել երեւելի գիտնակո-
նին:

Իստուս Լիբիխը ծնաւ մայիսի 12-ին
1803 թուին Գարմշտադ քաղաքում: Գիւմ
նազիւյում ուսումը աւարտելուց յետոյ, նա
մօտ մի տարի աշակերտ էր իր քաղաքի դե-
ղատան (սպտեկա) մէջ: Մեծ հակումն ու-
նենալով դէպի քիմիա, նա մօտ Բօննի հա-
մարարանը, 1819 թուին: 1826 թուին նա
արդէն պրօֆէսօր էր Գիւնէն քաղաքի հա-
մարարանում, որտեղ և մնաց 25 տարի:
Լիբիխի գործունէութիւնը տուեց մի նոր
զարկ քիմիային և այդ գիտութեան վրա
առանձին ուշադրութիւն դարձրեց: 1852
թուին Լիբիխը դառնում է Միւնխէնի պրօ-
ֆէսօր, իսկ 1860 թուին նախագահ գիտու-
թեան ակադէմիայի Բաւարիայում:

Լիբիխի գործունէութիւնը յայտնի է ոչ
ի՞նչ միայն լոկ գիտնական, այլ և գործնական
գիւտերից, որը ճշմարիտ մարդասիրական սշա-

նակութիւն ունեն: Մա հնարեց հիւանդներին համար մի անդադար սուպ և երեւելի մօտ է կ ս ար տ կ տ բ:

ՊՈՐՏՈՒԳԱԼԻՍ

Մարիլի Վալդառ, պարտոն տնօրէն, յայտնեց պալատին ստուգել թէ զահր վաճառքի մէջն է, թէ կան յեղափոխական տարրեր, որը աշխատում են երկպառակութիւն զգել երկրի մէջ: Նրա հետ չը համաձայնեց մի նիստերի խորհրդի նախագահ, պատասխանելով, որ Պորտուգալիան աւելի աջող հանգամանքներում գտնվելով քան թէ Եւրոպայի շատ երկրները, նա չէ տեսնում այն վտանգները որը պ. Վալդառի կարծիքով, սպառնում են իր հայրենիքին:

ՊԱՐՍՍԱՍՍԱՆ

Պարսից Շահը թողեց թէհրան քաղաքը ապրիլի 19-ին, եւրոպական ճանապարհորդութիւնը սկսելու համար: Բոլոր մեծ պաշտօնեաները ներկայ էին: Ժողովուրդը մեծ ոգևորութեամբ ուղևորում էր նորին մեծութեան: Շահի վրա մեծ սպաւորութիւն արաւ ժողովրդի ցոյց տուած համակրական զբոսմունքները: Նորա բացակայութեան ժամանակ 12,000 զօրք պիտի մնայ թէհրանում:

ԹԻԻՐ-ԲԻՍ

Անգլիացի ընկերութիւնը Ուստու և Դր-ժէկոն յանձն է աւտում շինել Փօքը-Ասիայում երկաթուղիների գծերը, առաջարկելով տէրութեանը իր մշակված պրոկոր: Շինվելու երկաթուղիների գծի չափը 3,000 կիլոմէտր (3000 վերստ) տարածութիւն կու-նենայ: Սուլթանը վաւերացրեց պրոկորը և անելու փոխառութիւնը հաստատեց: Յոսկայ որ այս օրերս Դժէկոնին կատարե-լապէս կը տրվի երկաթուղու վրա կօնցե-սիան:

Թուրքաց ակցիդի վարչութեան ծառա-յողների և Պարսից հպատակների մէջ, որը կօն արաբ անդաշտի էին պարագայում, մի շատ սաստիկ անբաւականութիւն է ծա-գել, այնպէս որ արիւնն էլ թափվեցաւ: Այդ և սրա նման տխուր իրողութիւններ աչքի առաջ ունեւելով, թուրքաց կառավարութիւնը գիտաւորութիւն ունի կանոնաւոր առեւտրա-կան պայմաններ կապել Պարսից պետութեան հետ:

ՆԱՄԱԿ ՎԻԵՆՆԱՅԻՑ

Ահա մօտենում են աշխարհի ամենահպաւնուր խաղաղական պատերազմի օրերը: Աւստրիայի մայ-րաքաղաքը ասպարէզն է ընտրուած այս համաշ-խարհական մրցութեան համար: Արդէն հաղարա-ւոր երկաթուղի լի կառքեր ամէն օր նիւթեր են բերում աշխարհի ամէն երկրներից, իւրաքանչիւր երկիր իր բոլոր ճարտարութեան և աշխատանքի ամենաազնիւ պտուղը ուղարկում է պատեղ: Այս խաղաղական պատերազմի մէջ արիւնը թափելու չէ, այլ մարդիկը միմեանց մէջ կը մաքառեն, կը մրցեն իրանց աշխատանքի ոգն ու թիւսը: Երկու տարուց աւելի Աւստրիայի մայրաքաղաքը զբաղուած է այդ խաղաղական մրցման ասպա-րէզը պատրաստելու և իւրաքանչիւր երկրի և ազգի երկրագործներն, գործարանատէրերը և ամենա-տեսակ մարդկային հոգեկան և նիւթական պի-տոյից համար պարագայով անձինք, ներկայացնելով իրանց ճարտարութիւնը և արուեստը մեծաւ ան-համբարութեամբ և յոյսով պատուեն այն օրին, երբ հանդէսը կըսկսուի և օտար համարուեստա-կանի աշխատանքը իրանց աշխատանքի հետ հա-մաշխարհական տեսութեանը և կրիտիկային կը ներկայացուին:

Մայիսի մէկին Աւստրիոյ կայսրը, միւս տէրու-թեանց ներկայացուցիչների հետ, բանալու են Վիենայի աշխարհագէտը, այս օրերը Պրուսիայի թագաժառանգը զայու է այդ հանդիսի բացման

համար իրեն ներկայացուցիչ հիւսիսային Գերմա-նիայի կայսերութեան: Յոնիսին զարու են այստեղ մեր Ռուսաց կայսրը, Պրուսիայի կայսրը, իսա-լիայի թագաւորը խօստանում են իրեն նրա քաղա-քական հանգամանքները թող տան, Ֆրանսիայի հասարակապետութեան նախագահ Թիէրը, հան-գուցեալ Նապոլէոն III Բոնոբարտի ժառանգը և ուրիշ ազգերի ներկայացուցիչներ: Նոյնպէս սպա-սոււմ են Պարսից Շահին, որի ընդունելութեան հա-մար Աւստրիայի կայսրը հրամայել է Պարսից ե-րաժշտական եղանակներից պիեսներ գրելու: Այս օրերս երեւելի երաժշտութեան խումբի կապելմայս-տերներից մէկն, հինգ զանազան երաժշտութեան եղանակներ ներկայացրեց, որոնցից կայսեր հրա-մանաւ մինը ընտրուեցաւ Շահի ընդունելութեան ժամանակ խաղալու, իսկ մնացած բոլոր եղանակ-ների համար կըրթոււմ են Վիենայի բոլոր երա-ժշտական խումբերը: Պարսից Շահին պէտք է ախորժեկ թուի երկար ճանապարհորդութենից յետոյ, վերադառնալ իր հայրենիքը եղանակներն ըն-լու... Այս տեսակ հայրենական զգացումն ոչ թէ միայն Պարսից Շահին է առանձին նշանակուած, այլ զրեթէ ամէն երկրի մարդիկը պատեղ կը դռնեն երեւի մի բան, որ ծանօթ լինի, որ մտաբերի իր հայրենիքն, խեղճ Հայն էլ մի բան կը գտնի այս-տեղ իր հայրենիքն մտաբերողը:—Եւսում է թէ Հայ վաճառականներից մի քանիսն էլ զանազան աւար-կաններ են ներկայացնում:

Աւելորդ չեմ համարում յիշել որ այս հանդիսի մէջ մանկավարժական և դաստիարակական մասի վրայ առանձին ուշադրութիւն է դարձրած. Զատիկ ուրբաթ օրը Աւստրիոյ թագաժառանգը ուսում-նական մասի և ուրիշ ներկայացուցիչների հետ այցելութիւն արաւ աշխարհաճանդէսի մանկավար-ժական և դաստիարակական մասին և ինչպէս ասոււմ են դարձրած, մնաց ներկայացրած աւար-կաններ և ձևերի բազմաթիւ լինելու վրայ:

Ապրիլի 1-ին:

Բ. Թ.

ԻՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Նորերումս մի գերմանացի գիտնական շատ հե-տաքերելի փորձեր է արել հաւերի արդաստա-րութեան մասին: Նորա գիտողութիւններից երե-ւում է որ հաւը իր գոյութեան ընթացքում կա-րող է մօտ 600 ձու քնել, սոցանից առաջին տա-րին 20 հատ, երկրորդ տարին 120, երրորդ 135, չորրորդ 114: Հետեւալ չորս տարին այս արդա-ստարութիւնը աւելի ու աւելի թուլանում է այն-պէս որ իններորդ տարին հաւը միայն 10 ձու է գնում: Այստեղից երևում է, որ ամենաարդի-նաւոր տարին երրորդն է և որ հինգ և վեց տա-րեկան հաւը միայն բնու է իւր տիրոջ համար:

«Մեղու հայտատանի» լրագրին հաղորդում են Ալեքսանդրապոլից որ անցեալ տարուց սկսած մինչև այժմ տեղի յղի կանանցից չափերը երկու-րեակներով ծննդական են պարկիւ և այդպիսի կանանց փութը մինչև քառասուն է հասել, իսկ մեր լրագրին գրում են Երևանից որ վերջին ժա-մանակները թէ հայ թէ թուրք հասարակութեան մէջ կանանց մեծ թիւը տոնի երեւոթիւն է եմթարկ-ված, միայն այն գնահատութեամբ որ 3 կամ 4 երեխաներից միայն մի ծնված, չափերը հրէշներ են լինում, մի քանի տնտիրով: ձեռքերով և եր-կու զլինանի: Երեխաները ծնվելուց յետոյ, չու-տով մնանում են:

Тифлисский Вестник լրագրից դարձեալ մի պատա-խան է տպել իր 43-որդ համարում պ. Ա. Մ-ի դէմ: Պ. Ա. Մ. հաւատացնում էր իր յօդվածում, որ Тиф. Вест. լրագրի յօդվածագիրը պահանջում էր վերջինը բոլորովին ռուսաց լեզու և նրա տեղը հայոց, վրաց կամ թուրքաց լեզու դարձնել դա-ստանութեան լեզուներ արվեստագործական ու-սումնարանում: Բայց Тиф. Вест. երբեք այդ տե-սակ բան ասած չէ, այլ պահանջում էր ինչպէս և մենք, որ գոնէ աքսորված չը լինեն տեղական լեզուներից դաստանութենից:

Միթէ պ. Ա. Մ. չը գիտէ որ նոր մեթոդի օգ-նութեամբ կարելի է դաս տալ և զուգընթաց երկու լեզու՝ օրինակ տեղական լեզու ռուս լեզվի օգնութեամբ և ռուս լեզու տեղականի օգնու-թեամբ և այլն...

Ковчезъ լրագրում կարդում ենք՝ մեզ հաղորդե-ցին, որ վիճակային ուսումնարանական վարչու-թիւնը զբաղված է այս րոպէիս ժողովրդական

ուսումնարանների տեսուհիների պաշտօնը հաստա-տելու, իւրաքանչիւր դասաւում Անդրկովկասեան երկրի մի մի տեսուչ: Այդ տեսուչներին կեն-թարկվին բոլոր ստորին ուսումնարանները, չը հա-նելով և եկեղեցականները, այլադասանները, բա-րեգործականները և այլն, որ իշխանութեան և պատկանէին այն ուսումնարանները:

«Մշակի» համարը արդէն չարված էր, երբ ստա-ցանք ապրիլի 19-ին բարեգործական նպատակով տուած ներկայացման հետեւալ հաշիւը: Խմբ.

Ս. մայիս 19-ին բարեգործական նպատակով ներկայացրած պ. Գարբիէլ Սունդուկեանցի «Բանդած օջախ» կատակերգութիւնից զո-յացելէ արդիւնը 1019 բուրլի և 10 կոպ.: Բացի դորանից մի քանի անձինք, չ'նայելով տունակաների գնների բարձրութեանը, նուե-րել են աւելորդ 23 բուրլի և 45 կոպէկ: Ուրեմն արդիւնը ընդամենը եղել է 1042 բուրլի և 55 կոպէկ: Ծախս եղել է 234 ռ. 95 կոպէկ, որից 200 բուրլին թատրոնի ծախք, իսկ մնացած 34 բուրլի և 95 կոպ. մանր ծախքեր: Զուտ արգիւնը մնացել է 807 բուրլի և 60 կոպէկ, որի երկու երրորդ մասը այն է 538 բուրլի և 40 կոպէկ ներ-կայացողները որոշել են յանձնել Ս. Գա-լեանեան հայ օրիորդաց ծխական ուսում-նարանին, իսկ մի երրորդ մասը այն է 269 բուրլի և 20 կոպէկը յանձնել Ս. Մարիա-մեան հայ օրիորդաց ծխական ուսումնա-րանին:

Մշակի 10 համարում Մեծ-Շուլաւերի նամակի մէջ տպուելէ 1000 ա. այնտեղի ջրանցք բանա-լու համար, բայց պէտք է լինէր 10,000 ա. նոյն-պէս ասուած է. եթէ առաջուց կտան 1000 ա. պէտք է լինէր 10,000 ա.

Ա Ռ Ե Ի Տ Ր Ա Կ Ա Ն

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Ապրիլի 25-ին):

ՈՍԿԻՆ, (պօլուխմպէշիւս)	6	9	կ.
ԲԱՄԲԱԿ Երևանու	4	10	»
» Երկրորդ տեսակը	4	—	»
» Ամերիկայի սերմից	7	—	»
ԲՈՒՐԻԹ Թուշի	5	50	»
» Երկրորդ տեսակը	5	—	»
» Թարեքմաի	3	—	»
ՇԱՔԱՐԸ Ռաի (Բրօցկու)	7	40	»
» Բիւս տեսակը	7	20	»
» զաղարանից տրանցիլ	5	20	»
մաքուր վճարած	8	50	»
ՇԱՔԱՐԱԽԱՅԸ Ռաի	6	50	»
ՂԱՀՎԱ Իրանի լաւ	—	—	»
ՂԱՀՎԱ Մօկօ, շատ լաւ	18	—	»
» Մարտինիայի, ցածր	12	50	»

ԱԼԻԻՐԸ Երևանի առաջին տե-սակը	1	45	»
» Երկրորդ տե-սակը	1	40	»
ԱԼԻԻՐԸ Գեանջու հասարակ	—	—	»
» Շորաքեայու	1	60	»
ԳԱՐԻՆ Երևանի	1	15	»
ՊԳՊԵՂԸ	11	—	»
ՇԻՐԱՄԻՍԻ Զէթ	8	—	»
ՄՈՍ	13	—	»

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆԱՆ ՎԱՃԱՌԱՆՈՑ	
ՓՈՒՆԱԿ. բարաթ պօս	6—75
» Թաւրիգում վճա	—
ՄԱՐՍԵԼ և Փարիզ 100 բուրլին ամէ	345 ֆր.
105ԳՈՆԻ վերա, (Օդէսայի կուրսը)	
7 բուրլի 34 կոպէկը ամէ	—
ՄԱՐՍԵԼԻՐ Բարաթի 50 ֆր. 10	
(3 փութ 2 դրմ.) ծախվում է	—
ՄԱՐՍԵԼԻՐ Երևանու Ամերիկ. սեր-մի բարաթը ծախվում է	95 ֆր.
» առաջին տեսակը	72 1/2 ֆր.
» երկրորդ տեսակը	62 1/2 ֆր.

ՄԱՐՍԵԼԻՐ Թուշի սպիտակ բուրլը	
» ծախվում է	95 ֆր.
» երկրորդ տեսակը	90 ֆր.
» Թարաք. բուրլը ամէ	70 ֆր.
» Գարաք. բուրլը ամէ	60 ֆր.
» երկրորդ տեսակը	55 ֆր.

ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Ապրիլի 13-ին)

105ԳՈՆԻ.—մի բուրլի ամէ 32 1/2 պէնս (փոխա-նակ 40 պէնս):	
ՓԱՐԻԶ.—մի բուրլի ամէ 344 սանտիմ (փո-խանակ 400 սանտիմ):	
Առաջին ներքին 5% փոխառութեան տոմսակ 15 1/2	
Երկրորդ	15 1/2
5% Բանկի տոմսակ	1 շրջանի 95
»	2 շրջանի 95
»	3 շրջանի —

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Քարափի թաղում (8 պօլիցիա-կան բաժին) Բէթղէհեմեան փողո-ցում Եւանգոլեանցի տանը քրէշով տրվում են արժան գնով նոր սարգած բնակարաններ, բաղ-կացած 6, 4 և 2 սենեակներից, իրանց խոհանոցներով և սարգափ-ներով: Ամէն մի բնակարան ունի երկու գաւիթ (բաղ) և երկու մուտք: Կառքերը համարում են դռանը:

Մենք ստացանք հետեւեալ ծախուցումն Թիֆ-լիսի Բարեգործական Ընկերութեան կողմից:

Թիֆլիսի բնակիչներին լաւ յայտնի է, որ քա-ղաքիս Բարեգործական Ընկերութեան ղեկաւոր նպատակներից մինն է ձրիաբար զատարակ ու թիւն և կըրթ ու թիւն ա-մենաչաւնոր դասի երեխաների, և որ միջոցները այդ նպատակին հասնելու համար, միշտ չեն նպաստում ընկերութեան ձգտումների իրա-գործմանը, կախված լինելով նրանցից անբաժան պատահական հանգամանքներից: Այդ տեսակ մի-ջոցները մինչև ցայժմ բարեգործականների զրա-մական տուրք էին և զանազան վիճակախաղներից պարահանդէսներից, ներկայացումներից, կօնցերա-ներից արդիւնքը:

Այժմ կամենալով հաստատել ըստ կարելոյն հաստատ և միակերպ մուտք կամաւոր նաւերներ, ընկերութեան նիւթական միջոցները աճեցնելու, և նրա գործունէութիւնը հաստատ սկիզբների վրա հիմնելու համար, ընկերութիւնը մտադրած է՝ կայսրութեան անդամները յայտնի ժամանակին անսանձիւ տուգանքով (կրօմիլի) ֆաղաբային վար-չութեան ընդհանուր ժողովից ընտրված անձնի մասնակցութեամբ, պիտի մանգան ամեն մի տուն, ինդիւրիով յանուն անօգնական որբերի նախըն-մի կօպէկ բարի գործի համար:

Յայտնելով սորա մասին հասարակութեանը, բարեգործական ընկերութիւնը յայտով է, որ Թիֆ-լիսի բնակիչները, իրանց յատուկ համակրութեամբ, զէպի բարեգործութիւնը արձագանք կը տան նրա այդ հրաւերին, յիշելով որ ստուղի ձեռքը չի աղ-քատանայ և որ ամեն տուրք բարի է և ամէն պարզ և կատարեալ:

Պատիւ ունեմ ծանուցանել որ ես մա-նաւորապէս ծանօթ լինելով «Զիչերսկի ջուր և Լիւծանթ գաղտ» շինելու կերպե-րին և նորա ապագարանների գործադրու-թեանն, որն որ ես անձամբ երկար ժամա-նակ այդ տեսակ գործարաններու մէջ պատ-րաստել սովորելով կ'պարագայէի, վասն որոյ և այդ տեսակ գործարանների բերած օգուտը և շահը աչքի առաջ ունենալով, որն որ և մի մեծ գումարի կարօտութիւն չունի նորա սկիւմն համար հարկաւ առարկայքը պատ-րաստելու կ'փութում առաջարկել սոյն իմ գիտաւորութիւնս և կ'հրաւիրեմ գործու-նէաւ անձանց ուշադրութիւնը օրօք որ կը կամենան մասնակից լինել մի ընկերութիւն հաստատելու համար Գանձակի մէջ Զիչ-երսկի ջրոյ գործարան բացել որոյ հիմնա-գրութեան համար հարկաւոր եղած գոր-ծիքներ բերել տալը, պատրաստելու և միով բանիւ ամենայն հոգսերը կարգաւորելով պարտք բոլորովին իմ վերա եմ աւտում. ցանկացողք այս իմ բարի նպատակ առաջար-կութեանս թող բարի հաճեն օրով առաջ իւրեանց կամքը յայտնել:

Գօստինեցա Պալմկա « № 29:—Թիֆլիս

Միքայիլ Միհրանեց